ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ

<<ՁՈՐԱՂԲՅՈՒՐԻ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԱՌԱՋՆԱՅԻՆ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ>>ՓԲԸ

գ. ՁՈՐԱՂԲՅՈՒՐ

Հեռ 060289203

N_55

<<_29__>> __12__ 2014թ.

ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/4 ծածկագրով շրջանակային

համաձայնարերով գնման ընթացակարգի մասնակիցներին

<<ՁՈՐԱԱՊԿ-ՇՀԱՊՁԲ-01/15>> ծածկագրով ընթացակարգի շրջանակներում <<Ձորաղբյուրի ԱԱՊԿ>>ՓԲԸ-ի կարիքների համար անհրաժեշտություն է առաջացել ձեռք բերելու <<Գնումների աջակցման կենտրոն>> ՊՈԱԿ-ի հետ կնքված N ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/4 շրջանակային համաձայնագրով նախատեսված ապրանքներ: Ապրանքների մատակարարման պայմանները ներկայացված են պայմանագրի նախագծում:

Հայտնում ենք , որ գնման առարկայի վերաբերյալ Ձեր կազմակերպության հայտը անհրաժեշտ է ներկայացնել գ. Ձորաղբյուր, Ազատության 19 հասցեով, Լ. Խոցանյանին մինչև 2015թ. հունվարի 27-ի, ժամը 12:00-ը:

Հայտերը կբացվեն գ. Ձորաղբյուր, Ազատության 19 հասցեում, 2015թ. հունվարի 27-ին , ժամը 12:00-ին:

Հայտը ներառում է գնման ընթացակարգին մասնակցելու դիմումը և գնային առաջարկը: Հայտն անհրաժեշտ է ներկայացնել <<ՁՈՐԱԱՊԿ-ՇՀԱՊՁԲ-01/15>> ընթացակարգի հրավերով սահմանված կարգով:

Կից ներկայացնում ենք կնքվելիք պայմանագրի նախագիծը և մասնակցի կողմից ներկայացվելիք փաստաթղթերի օրնակելի ձևերը:

Մասնակցի կողմից հայտի ներկայացումը պարտադիր չէ:

Տնօրեն՝ _____ Լ. Խոցանյան

:

Հավելված
ՁՈՐԱԱՊԿ-ՇՀԱՊՁԲ-01/15ծածկագրով
ընթացակարգի գնահատող հանձնաժողովին

ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ
ԴԻՄՈՒՄ

----------ն հայտնում է, որ ցանկություն ունի մասնակցելու
Ընթացակարգի մասնակցի անվանումը (անունը)
Աբովյանի քաղաքապետարանիի կողմից N ՁՈՐԱԱՊԿ-ՇՀԱՊՁԲ-01/15 ծածկագրով հայտարարված ընթացակարգի 1-37,1-20 չափաբաժնիններին
չափաբաժնի (չափաբաժինների) համարը
(չափաբաժիններին) և հրավերի (ծանուցման) պահանջներին համապատասխան ներկայացնում է հայտը։
----------ն հայտնում և հավաստում է, որ իր հիմնադրի
Ընթացակարգի մասնակցի անվանումը (անունը)
կողմից հիմնադրված կամ ավելի քան հիսուն տոկոս իր հիմնադրին պատկանող բաժնեմաս ունեցող կազմակերպությունների միաժամանակյա մասնակցությունը սույն ընթացակարգին բացառվում է, բացառությամբ՝
1) պետության կամ համայնքների կողմից հիմնադրված կազմակերպությունների,
2) համատեղ գործունեության կարգով (կոնսորցիումով) մասնակցության դեպքերի։

----------ն հայտնում և հավաստում է, որ չունի
Ընթացակարգի մասնակցի անվանումը (անունը)
գերիշխող դիրքի չարաշահում և հակամրցակցային համաձայնություն։

Մասնակցի էլեկտրոնային փոստի հասցե

--- ---
Մասնակցի անվանումը (անունը) (ղեկավարի պաշտոնը, Անուն Ազգանունը) (ստորագրությունը)

_____2014 թ.
¥ամսաթիվը՝ ամիսը¤

Հավելված
ՁՈՐԱԱՊԿ-ՇՀԱՊՁԲ-01/15 ծածկագրով
ընթացակարգի գնահատող հանձնաժողովին

Գ ն ի ա ռ ա ջ ա ր կ

Ուսումնասիրելով **ՁՈՐԱԱՊԿ-ՇՀԱՊՁԲ-01/15** ծածկագրով գնման ընթացակարգի հրավերը, ինչպես նաև Ձեր կողմից տրամադրված ծանուցումը, այդ թվում՝ կնքվելիք պայմանագրի նախագիծը,

Գնման ընթացակարգի մասնակցի անվանումը ¥անունը¤

առաջարկում է պայմանագիրը կատարել հետևյալ գներով.

Գնման առարկան	Առաջարկված ընդհանուր գինը		
	առանց ԱԱՀ-ի (ՀՀ դրամ)	ԱԱՀ-ն* (ՀՀ դրամ)	Ընդամենը պայմանագրի գումար (ՀՀ դրամ)
	տառերով և թվերով	տառերով և թվերով	տառերով և թվերով
1	*2*	*2*	*4=2+3*

* Եթե մասնակիցն ավելացված արժեքի հարկ վճարող է, ապա տվյալ պայմանագրի գծով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարվելիք ավելացված արժեքի հարկի գումարը նշվում է 5-րդ սյունակում:

_____

_____ _____
Մասնակցի անվանումը ¥անունը¤ (ղեկավարի պաշտոնը, Անուն Ազգանունը¤ (
ստորագրությունը¤

_____ __

_____

Կ. Տ.

_____2015 թ.

¥ամսաթիվը, ամիսը¤

ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ
ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ՁՈՐԱԱՊԿ-ՇՀԱՊՁԲ-01/15

Կոտայքի մարզ գ. Ձորաղբյուր << >> <<հունվար>> 2015 թ.

Ձորաղբյուրի ԱԱՊԿ ՓԲԸ-ն ի դեմս տնօրեն Լ.Խոցանյանի այսուհետ՝ «Գնորդ», մի կողմից, և _____, այսուհետ՝ «Վաճառող» մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին։

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում Գնորդին կամ նրա կողմից որոշված Ստացողին հանձնել սույն պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագրով նախատեսված _____ /այսուհետ՝ Ապրանք/, իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել այդ Ապրանքը և վճարել դրա համար:

2. ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

2.1 Վաճառողն Ապրանքը հասցնում է Գնորդին:

2.2 Ապրանքը մատակարարվում է սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված գնման ժամանակացույցին համապատասխան և ժամկետը սահմանվում է առնվազն 30 աշխատանքային օր,որի հաշվարկը կատարվում է սույն պայմանագիրը կնքելու օրվանից, բացառությամբ այն դեպքերի, երբ Վաճառողը համաձայնում է պայմանագիրը կատարել ավելի կարճ ժամկետում:

3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1 Գնորդն իրավունք ունի՝

3.1.1 Ապրանքը Պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել Ապրանքից.

3.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ սույն պայմանագրի 1 կետում նշված տեխնիկական բնութագրերին չհամապատասխանող Ապրանք.

ա) Չընդունել Ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանել անպատշաճ որակի Ապրանքը սույն պայմանագրին համապատասխանող որակի Ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու սույն պայմանագրի 7.3 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 7,2 կետով նախատեսված տույժը:

բ) հրաժարվել սույն պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու Ապրանքի համար վճարված գումարը.

3.1.3 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը վաճառողի կողմից պարտավորությունները խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է Ապրանք՝ սույն պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ սույն պայմանագրով սահմանված սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև Ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը .

3.1.4 Միակողմանի լուծել սույն պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), Եթե Վաճառողն էականորեն խախտել է սույն պայմանագիրը.

3.1.4.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում,եթե՝

ա) Մատակարարվել է անպատշաճ որակի Ապրանք,որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) խախտվել է Ապրանքի մատակարարման ժամկետը.

3.1.5 Ձննել Ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

3.2 Գնորդը պարտավոր է՝

3.2.1 Կատարել Պայմանագրին համապատասխան մատակարարված Ապրանքների ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

3.2.2 Վաճառողի հանձնած Ապրանքից սույն պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ Ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին.

3.2.3Սույն պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում իրականացնել վճարումները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև սույն պայմանագրի 7.5 կետով նախատեսված տույժը:

3.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին սույն պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ սույն պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով Ապրանքի բնույթից և նշանակությունից:

3.3 Վաճառողն իրավունք ունի՝

3.3.1 Գնորդից պահանջել ընդունելու սույն պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված Ապրանքը.

3.3.2 Գնորդից պահանջել հատուցելու վնասները, եթե Վաճառողը Գնորդի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո՝ ողջամիտ ժամկետում, այլ անձի՝ Պայմանագրով նախատեսվածից ավելի ցածր, սակայն ողջամիտ գնով վաճառել է Ապրանք՝ համապատասխան Պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով:

3.3.3 Գնորդից պահանջել վճարելու Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված Ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները.

3.3.4 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել Ապրանքը:Վաղաժամկետ մատակարարված և Գնորդի կողմից ընդունված Ապրանքը հաշվարկվում է հաջորդ փուլումմատակարարման ենթակա Ապրանքի քանակի հաշվին:

3.3.5 Սույն պայմանագրի մինչև 25 տոկոսը կարող է իրականացվել գործակալության պայմանագիր կնքելու միջոցով: Գործակալության

3.4 Վաճառողը պարտավոր է՝

3.4.1 Գնորդին հանձնել Ապրանքը՝ սույն պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում:

3.4.2 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

3.4.3 Գնորդի պահանջով տրամադրել Ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

3.4.4 Հետ տանել Գնորդի կողմից սույն պայմանագրի 3.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված Ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել Ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծաղսերը:

3.4.5 Սույն պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել սույն պայմանագրի 7.2 և 7.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

3.4.6 Գնորդին հանձնել Ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

3.4.7 Սույն Պայմանագրի 3.1.4 կետի համաձայն Պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս վնասները:

3.4.8 Սույն պայմանագրի կատարման (կանխավճարի) ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

4. ԱՊՐԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Սույն պայմանագրի ընդհանուր գինը կազմում է ՝ ----------(----------) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն: Յուրաքանչյուր ապրանքատեսակի միավորի գինը սահմանված է սույն պայմանագրի N 2 հավելվածում:Ապրանքի գինը ներառում է հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

Ապրանքի գինը ներառում է հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:Կանխավճարի մարումն իրականացվում է սույն պայմանագրով նախատեսված արձանագրությունների հիման վրա կատարվող վճարումներից նվազեցումներ (պահումներ)

կատարելու ձևով:Յուրաքանչյուր դեպքում նվազեցվող (կանխավճարի մարվող) գումարի չափը որոշվում է պայմանագրի ընդհանուր գնի նկատմամբ վճարվող գումարի համամասնությամբ:

4.2 Գնորդն իրեն մատակարարված Ապրանքի դիմաց վճարում է անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա N 2 հավելվածով՝ վճարման ժամանակացույցով նախատեսված ամսում, /եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո, ապա վճարումը կատարվում է 20 բանկային օրվա ընթացքում/ բայց ոչ ավելի, քան նույն հավելվածով՝ վճարման ժամանակացույցով տվյալ ժամանակահատվածի համար նախատեսված գումարի չափից: Եթե ընդունված Ապրանքի դիմաց վճարելու համար վճարման ժամանակացույցով նախատեսված միջոցները չեն բավարարում, ապա վճարումն սույն կետի պայմաններով իրականացվում է այն ամսում, որում դրամական միջոցները բավարարում են:

5. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

5.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված Ապրանքի որակի համար:

5.2 Հիմնական միջոց հանդիսացող ապրանքների գնման դեպքում երաշխիքային ժամկետ է սահմանվում Գնորդի կողմից ապրանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված առնվազն 365 օրացուցային օրը:

5.2.1 Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել թերություններ, ապա Վաճառողը պարտավոր է իր հաշվին,Գնորդի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

6. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

6.1 Պայմանագրի կամ դրա մասի կատարման արդյունքներն ընդունվում են Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության (այսուհետև՝ արձանագրություն) ստորագրմամբ: Վաճառողը՝ Ապրանքի հանձնման ավարտից 2 աշխատանքային օրվա ընթացքում Գնորդին է ներկայացնում հանձնած Ապրանքի մասին իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության երկու օրինակ (Հավելված N 3):

6.2 Արձանագրությունը ստորագրվում է, եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է Պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, արձանագրություն չի ստորագրվում և պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար սույն պայմանագրով նախատեսված միջոցները:

բ) վաճառողի նկատմամբ կիրառում է սույն պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

6.3 Գնորդը հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու պահից տասնօրյա ժամկետում Վաճառողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ Ապրանքը չընդունելու պատճառաբանված մերժումը:

7. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

7.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած Ապրանքի որակի և Պայմանագրով նախատեսված՝ մատակարարման ժամկետների պահպանման համար:

7.2 Վաճառողի կողմից սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում գանձվում է տույժ 0.05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

7.3 Սույն պայմանագրի 1 կետում նշված Տեխնիկական բնութագրին չհամապատասխանող Ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ Պայմանագրի ընդհանուր գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

7.4 Սույն պայմանագրի 7.2 և 7.4 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարներից:

7.5 Գնորդի կողմից սույն պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

7.6 Սույն պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

7.7 Տույժերի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտվորությունները լրիվ կատարելուց:

8. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված Համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

9. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

9.1 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից:

9,1,2 Սույն պայմանագիրը կնքվում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 7-րդ մասի հիմքով՝ պայմանով, որ դրա շրջանակներում գնում կարող է կատարվել անհրաժեշտ ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում: Սույն մասի համաձայն կնքված պայմանագիրը լուծարվում է, եթե այն կնքվելու օրվան հաջոդող տարվա ընթացքում պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցները չեն նախատեսվել:

9.2 Հիմնական միջոց հանդիսացող ապրանքների գնման դեպքում երաշխիքային ժամկետ է սահմանվում Գնորդի կողմից ապրանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված առնվազն 365 օրացուցային օրը:

9.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջների կատարման նկատմամբ հսկողության և (կամ) վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև Պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ Վաճառողին հաղթող ճանաչելու (ընտրելու) մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու Պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև Պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային Պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում Պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ Վաճառողը պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որը չի ծածկվում մինչև լուծումը գնման Պայմանագրի կատարմամբ Գնորդի ստացածով:

9.4 Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ նոր պայմանագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն պայմանագրի անբաժանելի մասը:

Սույն պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝

1) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի

Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

2) սույն պայմանագրով նախատեսված շուկայական գների ավելի քան քսան տոկոսով փոփոխման դեպքերի: Շուկայական գները կորոշվեն և դրանց փոփոխությունը կգնահատվի նախապես համաձայնեցվելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության հետ, որի վերաբերյալ կկնքվի լրացուցիչ համաձայնագիր:

Արգելվում է սույն պայմանագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող Ծառայության ծավալների կամ ձեռք բերվող գնման առարկաների միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման դեպքերը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև այդ ժամկետը լրանալը պայմանագրի կողմի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ՝ Պատվիրատուի մոտ չի վերացել գնման առարկայի օգտագործման պահանջը.

9,5 Սույն Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող և (կամ) Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) և (կամ) կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Սույն պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

9,6 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

9,7 Սույն պայմանագիրը և հավելվածները կազմված են էջից, կնքվում են երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, 2 և 3 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

9,8 Սույն պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Սույն պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

9,9 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

ԳՆՈՐԴ ՎԱՃԱՌՈՂ

Հավելված 3
<< >> << >> 2015թ. կնքված
,N _____ *ծածկագրով գնման պայմանագրի*

Վաճառող	Գնորդ
_____ _____	
_____ _____	
_____ _____	
_____	
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
_____	_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ Ն
ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

<<____>> <<_____>> 20 թ.

Պայմանագրի անվանումը՝ _____
_____
_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ <<____>> <<_____>> 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն՝ ի դեմս _____ և Կատարողը՝ ի դեմս_____,
հիմք ընդունելով, որ պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված մատակարարումները (այսուհետև՝ մատակարարումները) համապատասխանում են պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում Կատարողը __ _____ 20___թ-ից __ _____ 20__ թ. ընկած ժամանակահատվածում մատակարարել է հետևյալ ապրանքները

Գնման առարկայի անվանումը	Գնման առարկայի քանակական ցուցանիշը	մատակարարումների ժամկետները	Վճարման ենթակա գումարը (հազար դրամ)	Վճարման ժամկետը (ըստ ժամանակացույցի)
Ընդամենը				

Վերոհիշյալ մատակարարումների իրականացման վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Մատակարարումը հանձնեց Մատակարարումը ընդունեց

_____ _____

ստորագրություն ստորագրություն

_____ _____

Ազգանուն, Անուն Ազգանուն, Անուն

Կ.Տ. Կ.Տ.

Հավելված N 8
_____ ծածկագրով
Գնման ընթացակարգի հրավերի

ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՊԱՀՈՎՈՒՄ

ՏՈՒԺԱՆՔԻ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ

Կոտայքի մարզ գ. Զորաղբյուր
,,___,,_____2014թ.

_____ , ի դեմս Ընկերության
(Մասնակցի անունը (անվանումը)) տնօրեն _____ -ի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Ընկերություն), սույնով միակողմանի սահմանում է հետևյալ տուժանքի համաձայնությունը.

1. Համաձայնության առարկան

1.1 Հաշվի առնելով, որ Ընկերությունը հաղթող է ճանաչվել _____ (այսուհետև՝ Պատվիրատու) կողմից կազմակերպված կարիքների համար _____ ձեռքբերման ,, _____ ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում, պայմանագրի կնքման համար պետք է ներկայացնի պայմանագրի ապահովում և պայմանագրից բխող պարտավորությունների պատշաճ կատարումն ապահովելու նպատակով Ընկերությունը սահմանում է իր հետևյալ պատասխանատվությունը.
1.1.1 Պատվիրատուի կողմից կազմակերպված _____ծածկագրով պարզեցված ընթացակարգի արդյունքում կնքվող _____ ձեռքբերման գնման պայմանագրից բխող՝ գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ և պայմանագրով սահմանված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման դեպքում Ընկերությունը Պատվիրատուին վճարում է տուժանք _____ / _____ / ՀՀ դրամի չափով:
1.1.2 Պատվիրատուն իրավունք ունի Ընկերության կողմից սույն համաձայնության 1.1.1 կետում նշված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման դեպքում նշված գումարի գանձման պահանջ ներկայացնել Ընկերությանը, որն Ընկերությունը անվերապահորեն կկատարի նման պահանջ ստանալու օրվանից 5 բանկային օրվա ընթացքում:
1.1.3 Ընկերությունն իրավունք է վերապահում Պատվիրատուին, առանց պահանջ ներկայացվելու, անվիճելի և անառարկելի կարգով գանձել համապատասխան գումար, սույն համաձայնության 1.1.1 կետում նշված գումարի սահմաններում, Ընկերությանը սպասարկող _____բանկ ՓԲԸ ում կամ Ընկերությանը սպասարկող ցանկացած այլ բանկում բացված՝ Ընկերության ցանկացած այլ հաշվից: Սույնով Ընկերությունը հանձնարարում է _____բանկ ՓԲԸ- ին, ինչպես նաև իրեն սպասարկող բոլոր բանկերին, սույն համաձայնության գործողության ամբողջ ժամկետի ընթացքում Պատվիրատուի առաջին իսկ պահանջով և հետագա բոլոր պահանջներով տուժանքի մասին սույն համաձայնության հիման վրա Ընկերության բանկային հաշիվներից անակցեպտ (անվիճելի) կարգով գանձել պահանջվող գումարը:

2. Այլ պայմաններ

2.1Տուժանքի սույն համաձայնությունն ուժի մեջ է մտնում Ընկերության կողմից ստորագրման և կնքման պահից և գործում է մինչև կողմերի միջև սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:
2.2Սույն համաձայնությունը չի կարող վաղաժամկետ դադարել, Ընկերության կողմից հետ կանչվել, փոփոխվել կամ այլ կերպ դադարել առանց Պատվիրատուի գրավոր համաձայնության:
2.3Սույն համաձայնությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

3. Ընկերության հասցեն, բանկային վավերապայմանները

Տնօրեն_____

_____
(Գլխավոր հաշվապահի ԱԱՀ, ստորագրությունը)

Հավելված 1
<< >> << >> 2015թ. կնքված
N ՁՈՐԱԱՊԿ-ՇՀԱՊՁԲ 01/15 *ծածկագրով գնման պայմանագրի*

Զորաղբյուրի ԱԱՊԿ ՓԲԸ-ի կարիքների համար 2015 թվականի համար պլանավորված գնվելիք դեղորայքի
ՏԵԽՆԻԱԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

h/h	Դեղի անվանումը	Միջանցիկ կոդը՝ ըստ CPV դասակարգման	Դեղաձևը	Մատակարարման ժամկետը	Մատակարարման վայրը	Գնման առարկայի տեխնիկական և այլ բնութագրիչ տվյալները	Պիտանելիության ժամկետ	Քանակը	Միավորի գին /դրամ/
1	ամլոդիպին 10մգ	33621740	հաբ	2015թ	Կոտայքի մարզ գ. Զորաղբյուր Նոր Նորքի զանգված	Դեղահատ , ներքին ընդունման	1-1,5 տարի	3000	
2	ամօքսիցիլին 125/5	33651111	ֆլակ	2015թ	Կոտայքի մարզ գ. Զորաղբյուր Նոր Նորքի զանգված	Դեղափոշի ներքին ընդունման	1-1,5 տարի	20	
3	ամօքսիցիլին 250/5	33651111	ֆլակ	2015թ	Կոտայքի մարզ գ. Զորաղբյուր Նոր Նորքի զանգված	Դեղափոշի ներքին ընդունման	1-1,5 տարի	10	
4	ամօքսիցիլին+քլավուրինաթթու 156/5	33651112	ֆլակ	2015թ	Կոտայքի մարզ գ. Զորաղբյուր Նոր Նորքի զանգված	Դեղափոշի ներքին ընդունման	1-1,5 տարի	20	
5	ամօքսիցիլին+քլավուրինաթթու 228/5	33651112	ֆլակ	2015թ	Կոտայքի մարզ գ. Զորաղբյուր Նոր Նորքի զանգված	Դեղափոշի ներքին ընդունման	1-1,5 տարի	10	
6	ամօքսիցիլին+քլավուրինաթթու 625մգ	33651112	հաբ	2015թ	Կոտայքի մարզ գ. Զորաղբյուր Նոր Նորքի զանգված	Դեղահատ , ներքին ընդունման	1-1,5 տարի	30	
7	ատենոլոլ 100մգ	33621710	հաբ	2015թ	Կոտայքի մարզ գ. Զորաղբյուր Նոր Նորքի զանգված	Դեղահատ , ներքին ընդունման	1-1,5 տարի	720	
8	ացետիլսալիցիլաթ	33661121	հաբ	2015թ	Կոտայքի	Դեղահատ ,	1-1,5	3000	

	թու/կարդիոմագն/ 75մգ				մարզ գ. Զորաղբյուր Նոր Նորքի զանգված	ներքին ընդունման	տարի		
9	գլիկլազիդ/դիաբե տոն MR-60/	33611280	հաբ	2015թ	Կոտայքի մարզ գ. Զորաղբյուր Նոր Նորքի զանգված	Դեղահատ , ներքին ընդունման	1-1,5 տարի	1500	
10	դիգոքսին 0,25մգ	33621380	հաբ	2015թ	Կոտայքի մարզ գ. Զորաղբյուր Նոր Նորքի զանգված	Դեղահատ , ներքին ընդունման	1-1,5 տարի	200	
11	դիկլոֆենակ 25մգ/մլ	33631310	ամպ	2015թ	Կոտայքի մարզ գ. Զորաղբյուր Նոր Նորքի զանգված	Ներարկման լուծույթ	1-1,5 տարի	20	
12	երկաթ պարունակող /ֆերում լեկ/	33621210	22հիկ	2015թ	Կոտայքի մարզ գ. Զորաղբյուր Նոր Նորքի զանգված	Ներքին ընդունման օշարակ	1-1,5 տարի	3	
13	էնալապրիլ 20մգ	33621760	հաբ	2015թ	Կոտայքի մարզ գ. Զորաղբյուր Նոր Նորքի զանգված	Դեղահատ , ներքին ընդունման	1-1,5 տարի	1500	
14	էրգոկալցիֆերոլ	33611360	Ֆլակ	2015թ	Կոտայքի մարզ գ. Զորաղբյուր Նոր Նորքի զանգված	Դեղափոշի ներքին ընդունման	1-1,5 տարի	10	
15	լևոթիրոքսին 100մգ	33642230	հաբ	2015թ	Կոտայքի մարզ գ. Զորաղբյուր Նոր Նորքի զանգված	Դեղահատ , ներքին ընդունման	1-1,5 տարի	360	
16	կարբամազեպին 200մգ	33661128	հաբ	2015թ	Կոտայքի մարզ գ. Զորաղբյուր Նոր Նորքի զանգված	Դեղահատ , ներքին ընդունման	1-1,5 տարի	360	
17	կարվեդիլոլ 25մգ	33621690	հաբ	2015թ	Կոտայքի մարզ գ. Զորաղբյուր Նոր Նորքի զանգված	Դեղահատ , ներքին ընդունման	1-1,5 տարի	360	
18	հիդրոքլորթիազիդ 25մգ	33621580	հաբ	2015թ	Կոտայքի մարզ գ. Զորաղբյուր Նոր Նորքի զանգված	Դեղահատ , ներքին ընդունման	1-1,5 տարի	360	

19	պարացետամոլ մոմիկ 150մգ	33661126	հատ	2015թ	Կոտայքի մարզ գ. Զորաղբյուր Նոր Նորքի զանգված	Աղիքային մոմիկ	1-1,5 տարի	30	
20	բիսոպրոլոլ 5մգ	33621720	հաբ	2015թ	Կոտայքի մարզ գ. Զորաղբյուր Նոր Նորքի զանգված	Դեղահատ , ներքին ընդունման	1-1,5 տարի	2000	
21	ցիկլադոլ 2մգ	33661134	հաբ	2015թ	Կոտայքի մարզ գ. Զորաղբյուր Նոր Նորքի զանգված	Դեղահատ , ներքին ընդունման	1-1,5 տարի	720	
22	պրեդնիզոլոն 5մգ	33642210	հաբ	2015թ	Կոտայքի մարզ գ. Զորաղբյուր Նոր Նորքի զանգված	Դեղահատ , ներքին ընդունման	1-1,5 տարի	200	
23	պրոկայինի լ-թ/նովոկային/ 0,5%-5 մլ	33651120	ամպ	2015թ	Կոտայքի մարզ գ. Զորաղբյուր Նոր Նորքի զանգված	Ներարկման լուծույթ	1-1,5 տարի	20	
24	ջրազրկիչ աղ օռալ ռեհիդրոն	33611220	հատ	2015թ	Կոտայքի մարզ գ. Զորաղբյուր Նոր Նորքի զանգված	Դեղափոշի ներքին ընդունման	1-1,5 տարի	20	
25	սալբուտամոլ 2 մգ	33671113	հաբ	2015թ	Կոտայքի մարզ գ. Զորաղբյուր Նոր Նորքի զանգված	Դեղահատ , ներքին ընդունման	1-1,5 տարի	300	
26	սպիրինոլակտոն 25մգ	33621620	հաբ	2015թ	Կոտայքի մարզ գ. Զորաղբյուր Նոր Նորքի զանգված	Դեղահատ , ներքին ընդունման	1-1,5 տարի	1000	
27	վարֆարին 3մգ	33621110	հաբ	2015թ	Կոտայքի մարզ գ. Զորաղբյուր Նոր Նորքի զանգված	Դեղահատ , ներքին ընդունման	1-1,5 տարի	720	
28	իբուպրոֆեն 200մգ	33631330	հաբ	2015թ	Կոտայքի մարզ գ. Զորաղբյուր Նոր Նորքի զանգված	Դեղահատ , ներքին ընդունման	1-1,5 տարի	200	
29	ցեֆազոլին 1,0գ	33651116	սրվակ	2015թ	Կոտայքի մարզ գ. Զորաղբյուր Նոր Նորքի	Դեղափոշի ներարկման	1-1,5 տարի	20	

					զանգված	լուծույթի			
30	ցեֆտրաքսիոն 1,0գ	33651118	սրվակ	2015թ	Կոտայքի մարզ գ. Ձորաղբյուր Նոր Նորքի զանգված	ներարկման լուծույթ	1-1,5 տարի	20	
31	ազիթրոմիցին 250մգ	33651125	հաբ	2015թ	Կոտայքի մարզ գ. Ձորաղբյուր Նոր Նորքի զանգված	Դեղահատ , ներքին ընդունման	1-1,5 տարի	20	
32	սիմվաստատին 20մգ	33621410	հաբ	2015թ	Կոտայքի մարզ գ. Ձորաղբյուր Նոր Նորքի զանգված	Դեղահատ , ներքին ընդունման	1-1,5 տարի	1000	
33	օմեպրազոլ 20մգ	33611100	հաբ	2015թ	Կոտայքի մարզ գ. Ձորաղբյուր Նոր Նորքի զանգված	Դեղահատ , ներքին ընդունման	1-1,5 տարի	360	
34	ֆոլաթթու 5մգ	33621230	հաբ	2015թ	Կոտայքի մարզ գ. Ձորաղբյուր Նոր Նորքի զանգված	Դեղահատ , ներքին ընդունման	1-1,5 տարի	360	
35	ֆուրոսեմիդ 40մգ	33621590	հաբ	2015թ	Կոտայքի մարզ գ. Ձորաղբյուր Նոր Նորքի զանգված	Դեղահատ , ներքին ընդունման	1-1,5 տարի	800	
36	իզոսորբիդ դինիտրատ 20մգ	33621370	հաբ	2015թ	Կոտայքի մարզ գ. Ձորաղբյուր Նոր Նորքի զանգված	Դեղահատ , ներքին ընդունման	1-1,5 տարի	360	
37	ալբենդազոլ 400մգ	33691121	հաբ	2015թ	Կոտայքի մարզ գ. Ձորաղբյուր Նոր Նորքի զանգված	Դեղահատ , ներքին ընդունման	1-1,5 տարի	30	
	ԲՆԱ և առաջին բուժօգնության դեղորայք								
1	Բամբակ 50մգ	33141117	հատ	2015թ	Կոտայքի մարզ, գ. Ձորաղբյուր		1-1.5 տարի	10	
2	սկարիֆիկատոր	33141143	հատ	2015թ	Կոտայքի մարզ		1-1.5 տարի	700	
3	գլյուկոմետրի թեստ Ակուչեկ	33211120	հատ	2015թ	Կոտայքի մարզ		1-1.5 տարի	700	
4	մեզի անալիզի	33211110	տուփ	2015թ	Կոտայքի		1-1.5	100	

	ստրիպներ				մարզ		տարի		
5	փայտյա շպադել	33161220	հատ	2015թ	Կոտայքի մարզ		1-1.5 տարի	500	
6	ձեռնոց ոչ ստերիլ	33141159	հատ	2015թ	Կոտայքի մարզ		1-1.5 տարի	300	
7	էսգ ժապավեն 30/60	31651200	Հատ	2015թ	Կոտայքի մարզ		1-1.5 տարի	5	
8	Էթանոլ-70 մլ	33631250	մլ	2015թ	Կոտայքի մարզ		1-1.5 տարի	3000	
9	ներարկիչ 5մլ	33141142	հատ	2015թ	Կոտայքի մարզ		1-1.5 տարի	50	
10	ներարկիչ 10մլ	33141142	հատ	2015թ	Կոտայքի մարզ		1-1.5 տարի	50	
11	ներարկիչ 20մլ	33141142	հատ	2015թ	Կոտայքի մարզ		1-1.5 տարի	10	
12	քլորամին	33211100	կգ	2015թ	Կոտայքի մարզ	Ախտահանող լուծույթ	1-1.5 տարի	1	
13	դեքսամետազոն 4 լ-թ	33641413	ամպ	2015թ	Կոտայքի մարզ	ներարկման լուծույթ	1-1.5 տարի	20	
14	դիֆենհիդրամին 1%-1.0մլ/դիմեդրոլ/	33671130	ամպ	2015թ	Կոտայքի մարզ	ներարկման լուծույթ	1-1.5 տարի	40	
15	մետամիզոլ 50%-2.0/անալգինի լ-թ/	33661127	ամպ	2015թ	Կոտայքի մարզ	ներարկման լուծույթ	1-1.5 տարի	40	
16	նատրի քլոր 0.9 %-5.0մլ	33691136	ամպ	2015թ	Կոտայքի մարզ	ներարկման լուծույթ	1-1.5 տարի	40	
17	պապավերինի լ-թ 2.0մլ	33621540	ամպ	2015թ	Կոտայքի մարզ	ներարկման լուծույթ	1-1.5 տարի	40	
18	քլորոպիրամին հիդրոքլորիդ լ-թ	33641414	ամպ	2015թ	Կոտայքի մարզ	ներարկման լուծույթ	1-1.5 տարի	10	
19	դիբազոլ լ-թ 1 /1մլ	33621440	ամպ	2015թ	Կոտայքի մարզ	ներարկման լուծույթ	1-1.5 տարի	40	
20	ֆուրոսեմիդ լ-թ 2.0	33621590	ամպ	2015թ	Կոտայքի մարզ	ներարկման լուծույթ	1-1.5 տարի	40	

Գնորդ Վաճառող

---------- Լ. Խոցանյան _____

(ստորագրություն) (ստորագրություն)

Կ.Տ.

Հավելված 2
<<_____>> _____ **2015թ** ՁՈՐԱԱՊԿ-ՇՀԱՊՁԲ-01/15
ծածկագրով պայմանագրի

		>> >> 2015 >> >> /x ./			
		1- >>	2->>	3->>	4->>
1	Դեղորայք	**25%**	**50%**	**75%**	**100%**

Գնորդ Վաճառող

---------- Լ. Խոցանյան _____
(ստորագրություն) (ստորագրություն)
Կ.Տ.